Ավետիք Իսահակյան

Հայ ճարտարապետությունը

Մեծ ճարտարապետ Թ.Թորամանյանի
Հիշատակին

Հայրենի դաշտում քայլում եմ մենակ.
Աշուն է արդեն, և ձյունը նորեկ
Ծածկել է լանջքը սեգ Արարատի.
Հողմը սաստկաշունչ՝ հսկա մի բարդի
Կորաթեքել է աղեղի նման Հայկ նահապետի:

Սակայն իմ առաջ՝ կանգնել են ահա՝
Պատմության ահեղ հողմերին ընկճած,
Սյուներն հոյակապ հին ավերակի:

Դո՛ւք դարերի մեջ՝ դժվար ու դաժան,
Երբ ամենայն ինչ ընկած էր տապաստ,
Դո՛ւք, ով երկնախոհ գմբեթներ ու վեմ
Մնացիք ըմբոստ, մնացիք անսասան

Բռնակալների չարության ընդդեմ: